ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր լեզվի, այդ թվում նաև անգլերենի, բառակազմը մշտապես հարստանում է նոր բառերով և կապակցություններով՝ կապված հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների հետ:

Քաղաքագիտությունն արագ փոփոխվող գիտություն է, իսկ XX դարի վերջը և XXI դարի սկիզբը բուռն քաղաքական իրադարձությունների ժամանակաշրջան էր, որն իր արտացոլումը գտավ նաև անգլերենի քաղաքագիտական բառապաշարում: Անգլերենի, ինչպես նաև հայերենի, քաղաքագիտական բառապաշարի զգալի մասը նորաստեղծ է և կարիք ունի հանգամանալից քննության և ուսումնասիրման:

Լեզվաբանական գրականության մեջ [Арнольд И.В., 1973, Աղայան Է. Բ.,1984, S. Gasparian, 2002] նշվում է, որ յուրաքանչյուր լեզվի բառապաշարում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական բառաշերտերը. **ա)** ընդհանուր գործածության բառապաշար, **բ)** ընդհանուր գիտական բառապաշար, **գ)** նեղ մասնագիտական բառապաշար:

Ընդհանուր գործածության բառաշերտում ընդգրկված են այն բառերը, որոնք հանդիպում են լեզվի բոլոր ոլորտներում և տարբեր ոճերում՝ կազմելով տվյալ լեզվի բառապաշարի միջուկը: Օրինակ՝ and, but, although, one, more, without, same, know և այլն:

Ընդհանուր գիտական բառաշերտում ընդգրկված են գիտական ոճին պատկանող բառեր կամ բառակապակցություններ, որոնք չեն մտնում որևէ կոնկրետ գիտության բառանյութի մեջ, այդ իսկ պատճառով կարող են բնութագրել տարբեր գիտություններում հանդիպող երևույթներ, գաղափարներ, հասկացություններ: Այս ուղղվածությամբ է պայմանավորված դրանց գործածության լայն շրջանակը: Ընդհանուր գիտական բառաշերտի օրինակներ են՝ was considered to be essential, as a matter of fact , as has already been mentioned, it is our belief that և նմանատիպ այլ բառեր ու բառակապակցություններ:

Մասնագիտական բառաշերտին պատկանում են այն բառերը, տերմիններն ու արտահայտությունները, որոնք կիրառվում են որևէ կոնկրետ գիտության մեջ [S. Gasparian, 2002, էջ 18-19]:

Գոյություն ունեն լեզվի բառապաշարի հարստացման արտաքին և ներքին ուղիներ:

Բառապաշարի հարստացման արտաքին ուղին նոր բառային միավորների ստեղծումն է օտար լեզուների ազդեցությամբ, որոնք բաժանվում են մի քանի ենթաշերտի. ա) փոխառություններ, բ) ազատ թարգմանություն-նորակազմություններ, գ) պատճենումներ [Բալեզիզյան Ա, 1997, էջ 74-75]:

Բառապաշարի հարստացման ներքին ուղին նոր բառային միավորների ստեղծումն է տվյալ լեզվին յուրահատուկ ներքին միջոցների շնորհիվ: Այդ հարցերով զբաղվում է բառակազմությունը: Բառակազմական համակարգը տվյալ լեզվի բառակազմական միջոցների, բառակազմական միավորների, բառակազմական տեսակների ու դրանց կաղապարների և բառերի կազմության հետ կապված հնչյունաբանական ու քերականական իրողությունների ամբողջությունն է: Ամեն մի լեզու իր պատմական զարգացման ընթացքում ստեղծում է բառեր կազմելու իր միջոցները: Որոշ բառակազմական միջոցներ կենսունակ են մնում լեզվի զարգացման յուրաքանչյուր փուլում, այլ միջոցներ հապառ վերանում են, նրանց փոխարեն առաջանում են նորերը: Ածանցումը (նախածանցում, վերջածանցում) անգլերենի քաղաքագիտական տերմինների ստեղծման առավել գործուն բառակազմական միջոցներից է: «Ածանց ասելով հասկանում ենք մի ձևույթ, որն իր զարգացման ընթացքում ծեռք է բերել մի ամբողջ խումբ բառերին հատուկ վերացական նշանակություն, և միանալով բառահիմքին, փոխում է նրա իմաստը» [Կարաշչուկ Պ. Մ., 1977, էջ 33]:

Անգլերենի քաղաքագիտական բառապաշարն ունի իր յուրահատկությունները, որոնք պայմանավորված են քաղաքագիտական հասկացությունների բնույթով: Վերլուծելով անգլերենի քաղաքագիտական տերմինները նրանց բառակազմական կառուցվածքի տեսանկյունից, պետք է նշել, որ նրանցում մեծ թիվ են կազմում ածանցյալ բառերը: Սա վկայում է այն մասին, որ ածանցումը, ի տարբերություն անգլերենի բառակազմական այլ միջոցների (բառաբարդում, փոխակարգություն), քաղաքագիտական տերմինների կազմության առավել տարածված ձևն է:

Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել են ժամանակակից անգլերենի այն գործուն նախածանցներն ու վերջածանցները, որոնք քաղաքագիտական նոր տերմիններ են կազմում: Քաղաքագիտական տերմինները հիմնականում վերացական հասկացություններ են արտահայտում և կազմվում են վերացական ածանցներով: Պետք է նշել, որ անգլերենի քաղաքագիտական բառապաշարի զգալի մասը ածանցյալ տերմիններ են:

Հայտնի է, որ գոյություն չունեն այնպիսի ածանցներ, որոնք գործածվում են միայն քաղաքագիտական տերմինաբանության մեջ կամ միայն ընդհանուր գործածության բառապաշարում: Ածանցների մի խումբ ավելի հաճախ կիրառվում է քաղաքագիտական և ավելի սակավ գործածվում է ընդհանուր

գործածության բառապաշարում: Ածանցների մի այլ խումբ ավելի հաճախ գործածվում է ընդհանուր գործածության բառապաշարում, քան՝ բառ-տերմիններում: Գոյություն ունի ածանցների մի այլ խումբ, որը հավասարապես գործածվում է և՛ քաղաքագիտական տերմինաբանության մեջ, և՛ ընդհանուր գործածության բառապաշարում:

Ուսումնասիրության ընթացքում անգլերենի ածանցների իմաստը պարզելու համար օգտվել ենք Պ. Ցարյովի (1977) և Պ. Կարաշչուկի (1977) աշխատություններից: Հայերեն համարժեք ածանցները տրված են ըստ Ս.Ա. Գալստյանի (1978):

Քաղաքագիտական տերմինաբանության մեջ առավել հաճախ գործածվող վերջածանցներն են՝

ա) գոյականակերտ վերջածանցներ. –ism, որը լայնորեն գործածվում է քաղաքագիտական բառապաշարում: –ism վերջածանցով բառերն ունեն հետևյալ իմաստները՝

1. ուսմունք, տեսություն. օրինակ՝ pluralism- բազմակարծություն, urbanism- քաղաքայնություն, authoritarianism տիրազորություն, absolutism միահեծանություն, behavoralism վարքականություն,

2. ուսմունք, տեսություն, որը կապված է նրա ստեղծողի անվան հետ. օրինակ՝ Chauvinism շովինիզմ, շովինականություն, Francoism Ֆրանկոյականություն, Gandizm գանդիականություն, Castroism կաստրոյականություն,

3.հասարակարգ, դարաշրջան, կառավարման ձև. օրինակ՝ communism – համայնավարություն, constitutionalism – սահմանադրականություն, feudalism ավատատիրություն, federalism դաշնայնություն,

4. որևէ տեսության, ուսմունքի հետևորդներ. օրինակ՝ institutionalism նվիրվածություն հաստատված ինստիտուտներին, կառուցվածքայնություն, cosmopolitanism-աշխարհաքաղաքացիություն, separatism անջատվածություն,

5. վիճակ, յուրահատկություն, առանձնահատկություն. օրինակ՝ conservatism – պահպանողականություն, moderatism – չափավորություն /հայացքներում, քաղաքականության մեջ/:

–ism վերջածանցով բառերը հանդիպում են նաև ընդհանուր գործածության բառապաշարում: Սրանց մեծ մասը վերաբերում են, այսպես կոչված, միջազգային բառերին: Օրինակ՝ feminism իգականություն, vandalism վայրագություն:

Քաղաքագիտական բառապաշարում կիրառվում են նաև -ness, -tion, -ment,- ity, -y գոյականակերտ ածանցները, օրինակ՝ democracy -ժողովրդավարություն, lurality - հարաբերական մեծամասնություն, appeasement խաղաղեցում, transformation-կերպափոխություն, monarchy - միապետություն,

որոնք նույնպես լայնորեն գործածվում են ընդհանուր գործածության բառապաշարում: Այս վերացական վերջածանցներն իրենց իմաստով տարբերվում են –ism վերջածանցի հիմնական իմաստներից: Սրանց հիմնական նշանակությունն է՝ վիճակ, յուրահատկություն, կատարված գործողության արդյունք, օրինակ՝ pluralism - բազմայնություն, բազմակարծություն (ուսմունք), plurality հարաբերական մեծամասնություն:

Գործող անձ ցույց տվող առավել կիրառական վերջածանցներն են՝ -ist և -ian (an), որոնք ունեն հետևյալ իմաստները.

• կողմնակից, որևէ տեսության, ուսմունքի, համակարգի հետևորդ. օրինակ՝ nationalist - ազգայնամոլ, parliamentarian խորհրդարանական, egalitarian - հավասարապաշտ, utilitarian - օգտապաշտ, libertarian ազատական:

• որևէ տեսության, ուսմունքի հետևորդ. Zionist - սիոնիստ, սիոնական, Owenian օուենական:

Հաճախ նույն տեսության հետևորդներին արտահայտող բառերում կարելի է հանդիպել այս երկու վերջածանցները, օրինակ՝ geopolitician, geopolitist- աշխարհաքաղաքագետ:

Գործող անձ ցույց տվող այլ վերջածանցներ (-er, -or, -man, -ee, -ster) այնքան էլ գործուն չեն քաղաքագիտական բառապաշարում: Ընդհանուր գործածության բառապաշարում առավել գործուն են -er, -man վերջածանցները: -ist վերջածանցը նույնպես գործուն է ընդհանուր բառապաշարում, սակայն այն այնքան տարածված չէ, ինչքան -er վերջածանցը: -ian վերջածանցը ընդհանուր գործածության բառապաշարում հազվադեպ է հանդիպում:

-ist և -ian վերջածանցները իրենց «ուսմունք, տեսություն» իմաստով կապակցվում են վերացական -ism վերջածանցով կազմված գոյականների հետ: Քաղաքագիտական տերմինաբանության մեջ հանդիպում են նմանատիպ շատ բառ-տերմիններ, ինչպիսիք են՝ տեսություն, ուսմունք (-ism), տվյալ տեսության, ուսմունքի հետևորդներ(ist):

բ) ածականակերտ վերջածանցներ.

Անգլերենի քաղաքագիտական բառապաշարում ամենագործուն ածականակերտ վերջածանցներն են՝ -ic, -al, -ist, -an (-ian), -ive:Այս վերջածանցով ածականները ունեն «վերաբերող, բնութագրող, կազմված» իմաստը: Օրինակ՝ critical- քննադատական,democratic- ժողովրդավարական,ideologic գաղափարախոսական, humanist - մարդասիրական, monarchist - միապետական, republican- հանրապետական, conservative – պահպանողական:

Ընդհանուր գործածության բառապաշարում առավել գործուն են հետևյալ ածականակերտ վերջածանցները. - y, -ish, -less, -like, -able, -ful:

Քաղաքագիտական բառապաշարի առավել գործուն ածականակերտ վերջածանցներն են՝ -ic, -al, -ist, - an *(-ian)*, -ive. որոնցից -ic, -al, -ive վերջածանցները գործուն են նաև ընդհանուր գործածության բառապաշարում, իսկ -ist, -an/-ian ածականակերտ վերջածանցները պակաս գործուն են ընդհանուր գործածության բառապաշարում:

գ) բայակերտ վերջածանցներ. Քաղաքագիտական բառապաշարի ամենագործուն բայակերտ վերջածանցը *-ize* վերջածանցն է, որն ունի հետևյալ իմաստները.

1. Հիմքի արտահայտած իմաստից ելնելով որևէ բան անել. օրինակ՝ democratize - ժողովրդավարացնել, socialize- հասարակայնացնել:
2. Որևէ տեսության կամ գիտության տեսանկյունից մեկնաբանել կամ բացատրել. օրինակ՝ secularize – աշխարհիկանացնել:

Հաճախ -tion / ion վերջածանցներով կազմված վերացական գոյականները կազմվում են –ize վերջածանցով բայերից, օրինակ՝ socialize- հասարակայնացնել, socialization - հասարակայնացում, secularize - աշխարհիկանացնել, secularization աշխարհիկանացում: -ize վերջածանցը լայնորեն տարածված և գործուն է նաև ընդհանուր գործածության բառապաշարում:

-fy, -ate, -en բայակերտ վերջածանցները համեմատաբար քիչ են գործածվում քաղաքագիտական բառապաշարում:

դ) մակբայակերտ վերջածանցներ.-ly վերջածանցով կազմված մակբայները հանդիպում են ինչպես քաղաքագիտական, այնպես էլ ընդհանուր գործածության բառապաշարում: Օրինակ՝ socially - հասարակայնորեն:

Վերլուծելով անգլերենի քաղաքագիտական բառապաշարի վերջածանցների կիրառության խնդիրը՝ պետք է նշել նշված վերջածանցներով կազմված բառերի համար տիպական իմաստային կապերը: Օրինակ, ինչպես արդեն նշել ենք, -ism վերջածանցով կազմված վերացական գոյականները իմաստային պլանում կապված են գործող անձ նշող -ist (ավելի սակավ -ian) վերջածանցներով կազմված գոյականների հետ: Այս գոյականների իմաստային կապերը տարածվում են առավել գործուն ist, -ic, -al վերջածանցներով կազմված ածականների վրա: Օրինակ՝ socialism - հասարակավարություն, socialist - հասարակայնավար, socialistic - հասարակավարական: Նշված իմաստային կապերը տարածվում են նաև բայերի վրա, օրինակ՝ utilitarianism - օգտապաշտություն, utilitarian- օգտապաշտ, utilitarian-օգտապաշտական, utilitarianize - դիտարկել օգտապաշտական տեսանկյունից: Որպես կանոն, նման բայերն իմաստային պլանում կապված են -tion վերջածանցով կազմված գոյականների հետ: Օրինակ՝ communize ընդհանուր, համայնքային դարձնել, communization- համայնավարացում: -ly վերջածանցով մակբայ-տերմինները իմաստային

տեսանկյունից նույնպես կապված են նշված բառերի հետ: Օրինակ՝ social– հասարակական, socially – հասարակայնորեն:

Այսպիսով, անգլերենի քաղաքագիտական բառապաշարի առավել տարածված իմաստային խումբը -ism, -ist, -ian, -ic, -al, -an, -ize, -tion, -ly, վերջածանցներով կազմված բառերի խումբն է: Անգլերենի քաղաքագիտական բառապաշարում կիրառվող առավել գործուն վերջածանցների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջածանցների մի մասը առավել գործուն է քաղաքագիտական տերմինաբանության մեջ (-ism, գոյականակերտ և ածականակերտ -ian (-an), -ist վերջածանցները), մյուս մասը՝ ընդհանուր գործածության բառապաշարում (ածականակերտ -less, -ful, -ish -y, -ed և այլն, գոյականակերտ -er, -man վերջածանցները): Քննության առարկա վերջածանցները կարող են գործածվել և՝ քաղաքագիտական, և՝ ընդհանուր գործածության բառապաշարում (վերացական գոյականների -tion,-ness,-ity վերջածանցները, ժխտական նախածանցները):

Քաղաքագիտական տերմինաբանության մեջ առավել հաճախ գործածվող ժխտական նախածանցներն են՝ un-, non-, anti-, in- (im, ir), dis-, counter-, de-, des- ժխտական նախածանցները: Օրինակ՝ ungovernability - անկառավարելիություն, nonpartisan - անկուսակցական, անկողմնակալ, non-governmental - ոչ կառավարական, antidemocratic - հակաժողովրդավարական, anti-socialist - հասարակավարության հակառակորդ, independence- անկախություն, disarm -զինաթափել, disarmament - զինաթափում, counter-revolution հակահեղափոխություն, de-bureaucratization ապաբյուրոկրատացում, des-information ապատեղեկատվություն: Պակաս գործուն է a - (ոչ, չունեցող, որևէ որակից զուրկ, ան-, ապա-) ժխտական նախածանցը, օրինակ՝ apolitical-ապաքաղաքական բազմաթիվ, multinational բազմազգ, multi-racial բազմազգ, multi-lingual բազմալեզու: *Trans-* **ա/** անդին, այն կողմում, transborder սահմանից այն կողմ, transatlantic տրանսատլանտիկ **բ/** ձևի փոփոխություն transformation ձևափոխում, **գ/** ինչ-որ բանի գերազանցում, trans-human գերմարդկային:

Քաղաքագիտական բառապաշարում շատ են հանդիպում նախածանցի գործառնությամբ հանդես եկող self - տարրով կազմված բառերը, օրինակ՝ self-determination- ինքնորոշում, self-interest- սեփական շահ, self-government-ինքնակառավարում:

Պակաս գործուն են tele – (հեռու, հեռա-), օրինակ՝ telecommunication-հեռահաղորդակցություն, television-հեռուստատեսություն: Supra- (վեր-, գեր-) օրինակ՝ suprastate (supragovernmental) bodies - վերպետական մարմիններ:

Վերը նշված եզրահանգումներին եկել ենք ուսումնասիրելով մեր կազմած բառացանկի ավելի քան 2000 տերմիններն ու տերմինակապակցությունները: Բառացանկը կազմելիս օգտվել ենք Վ. Պողոսյանի, Կ. Միրումյանի, Ա. Բաբաջանյանի, Ս. Աստվածատուրովի կազմած «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարանից, ուր ընդգրկված են ավելի քան 1200 բառահոդված և Այեն Մակլինի կազմած քաղաքագիտության և քաղաքականության Օքսֆորդի բառարանից /թարգմանիչ՝ Ալ. Աղաբեկյան/, որն ընդգրկում է քաղաքագիտության և քաղաքականության վերաբերյալ ավելի քան 1100 ընդարձակ բառահոդված: Օգտվել ենք նաև ինտերնետ կայքերից:

Օգտագործված գրականություն

1. Աղայան է. Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան, 1984:
2. Арнольд И.В., Лексикология современного английского языка. М.1973.
3. Բարլեզիզյան Ա.Կ., Հայ-ֆրանսիական առնչությունները 19-րդ դարում, Երևան, 1997:
4. Գալստյան Ս.Ա., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, ԵՊՀ, 1978:
5. Gasparyan S., Knyazyan A. Academic English for Linguists. Yerevan State University, Yerevan, 2002
6. Карашук П.М., Словообразование английского языка. М. 1977.
7. Մակլին Այեն, Օքսֆորդի բառարան, քաղաքագիտություն և քաղաքականություն, Գիտանք, Երևան, 2003:
8. Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ա., Քաղաքագիտություն, հանրագիտական բառարան, Նժար, Երևան, 2004:
9. Царев П. В., Производные слова в английском языке. М. 1977.
10. Roberts, Andrew 3.1999/Dictionary - Social Science Dictionary <http://www.mdx.ac.uk/www/study/sshglo.htm> Middlesex University.
11. English-Finnish Glossary of United States Political Terms Eeva-Maija Aitonurmi, 2001 eeva-maija.aitonurmi@elematic.com)